Արձանագրություն N 4

ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/3-Ա ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 10 դեկտեմբերի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Քելեջյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Մխիթարյանը և Գ. Հունանյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. Գնահատման արդյունքների հաստատման վերաբերյալ

Հարցում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիսների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/3-Ա ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Հարցումը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե 03.12.2019թ.-ին:

05.12.2019թ. ստացվել է համապատասխան եզրակացությունը:

Հիմք ընդունելով ստացված եզրակացությունը, մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և ամփոփելով գնահատման թերթիկները՝ «ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի տարածքում Արաքս գետի սահմանային Հ-39 նշանի հատվածում ափապաշտպան կառույցների վերականգնման» աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/3-Ա ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից համարել «Շինաշխարհ» ՍՊԸ-ին:
2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,
3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել նշված չափաբաժնում ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Նախագահ ---------- Հ. Քելեջյան

Անդամն ---------- Է. Մխիթարյան

---------- Գ. Հունանյան

Քարտուղար ---------- Ա. Սարգսյան